

Աստուծոյ առաջ պարտազանց գանուած է. սակայն ժողովուրդ չունենալով Աստուծուց կը խնդրէ, որ հօտը ժողովուրդ գառնայ՝ իւրեան հետեւի:

Խանը տեսաւ որ ոչխարաց կաթը կրկնապատուած է, իրեն մեծ զարմանք ազդեց. քանի անգամ զազանի փորձեր արաւ իմանալ թէ հովիւն ի՞նչ կանէր, որ ոչխարներն կը յառաջանան, առատ կաթ կտան: Մի օր զազանի լեռն կը գնայ, կը տեսնայ որ քահանայն յարեւելս դարձած՝ աղօթքի հետ է, ոչխարներն ևս երկու ետեւի ոտքի վերայ կանգնած են «Փառք ի բարձունս»ի: Ուստի Խանը ետ կը դառնայ, կնոջ կը պատմէ տեսածն, քանի թախանձանքներից յետոյ կինը կը հասկացնէ որ այդ մարդը հայ և արդար լինելու է, և թէ աղօթքի կանգնած է:

Քահանայն բերել կը տան, կը խնդրեն որ ստոյգն պատմէ, քահանայն նորանցից երզում առնելէն յետոյ՝ իւր ճանապարհորդութեան պատճառներն կը պատմէ:

Խանը կընդունի քահանային հաւատքը, կինը բացարձակ կը յայանէ թէ քահանայն իւր հայրն է, առաջին օրէն ճանաչած ու չէր յայանած՝ երկիւղ կրելով իւրմէ:

Խանը իւր թեթեւ հարստութիւնը հաւաքելով՝ գիշերանց ճանապարհ կընկնի կնոջը և քահանայի հետ՝ Մանազկերտի Հասան փաշա զիւղը կը գայ, կը մկրտուի, ուր կը մնայ միջոց մի գազանի, յետոյ լսելով իւր թուրք ազգականներն իմացած են ամեն բան և խանին սպանելու մտազիր են, ընտանիքը առնելով խոյս կտայ Տիգրանակերտ. ուր կան այժմ նորա թոռներն և կաւանդեն վերոյ ասածներս:

Զեռեան զիւղի Ռէս Միսօն որ հաւատարիմ ա-